

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Մարզի խորհրդի նիստը վարում էր ՀՀ Կոտայքի մարզպետ Կ.Շահգալոյանը

ք.Հրազդան

14.03.2014թ. ժամը 15:30

ՄԱՄՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

- Մարզի խորհրդի անդամ 67 համայնքների ղեկավարներ
- Վ.Բակլաչյան, Ա.Ղազարյան, Կ. Մարգարյան - ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալներ
- Մ.Գարեգինյան -ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
- Մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ
- Մարզի դպրոցների տնօրեններ և առողջապահական հիմնարկների ղեկավարներ
- Վ. Ռշտունի- ՀՀ Կոտայքի մարզի դատախազ
- Ս. Հարությունյան-ՀՀ Ոստիկանության Կոտայքի մարզային վարչության պետ, գնդապետ

Մարզի խորհրդի նիստին մասնակցում էին նաև՝

- Տ. Սարգսյան- ՀՀ վարչապետ
- Ս. Կարապետյան- ՀՀ գյուղատնտեսության նախարար
- Ա. Ասատրյան- ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարար
- Հ. Օհանյան-տարածքային կառավարման նախարարության ներկայացուցիչ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

1. Մարզում իրականացվող գարնանային գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման մասին:

/գեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Մ. Եղիազարյան/

2. Նախարարության գերակա խնդիրների և մարզի գյուղացիական տնտեսությունների հետ համագործակցության մասին:

/ՀՀ գյուղատնտեսության նախարար Ս. Կարապետյան /

3. Գյուղացիական բնագավառի աշխատողների պարգևատրումներ:

4. Հայաստանի Հանրապետությունում պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման մասին:

/ՀՀ վարչապետ Տ. Սարգսյան/

5. Այլ հարցեր:

ԼՍԵՑԻՆ՝

1. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Մ. Եղիազարյանի զեկուցումը մարզում իրականացվող գարնանային գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման մասին:

Ջեկուցումն ընդունվեց ի գիտություն :/Կցվում է/:

2. ՀՀ գյուղատնտեսության նախարար Ս. Կարապետյանի ելույթը նախարարության գերակա խնդիրների և մարզի գյուղացիական տնտեսությունների հետ համագործակցության մասին:

Նախարարը նշեց, որ Կոտայքի մարզին տրամադրվել է հանրապետություն ներմուծված գարնանացան գարի, եգիպտացորեն, առվույտ, կորնզան, ագոտական պարարտանյութ և դիզելային վառելանյութ: Հանրապետություն են ներկրվել նաև 120 տրակտորներ Բելառուսից, աշխատանքներ են տարվում նաև հացահատիկահավաք կոմբայնների գնման ուղղությամբ:

Ս. Կարապետյանը տեղեկացրեց, որ Կոտայքի մարզում 10%-ով ավելացել են մշակվող հողատարածքները, ստեղծվել են գյուղացիական կոոպերատիվներ, զգալիորեն բարելավվել է ջերմոցային տնտեսությունների աշխատանքը:

Նախարարն անդրադարձավ նաև գյուղատնտեսության բնագավառում Կոտայքի մարզում գերակա խնդիրներին:

3. ՀՀ գյուղատնտեսության նախարար Ս. Կարապետյանը պարզևատրեց գյուղատնտեսական բնագավառում ակնառու հաջողությունների հասած մի խումբ աշխատողների:

4. ՀՀ վարչապետ Տ. Սարգսյանի ելույթը Հայաստանի Հանրապետությունում պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման մասին:

Վարչապետն իր ելույթում ներկայացրեց կենսաթոշակային համակարգի բարեփոխումների անհրաժեշտությունը, նպատակն ու ակնկալվող արդյունքները: Տ. Սարգսյանը նշեց, որ 43 երկրներում արդեն իսկ ներդրված է պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգը: Անդրադառնալով բնակչության որոշ հատվածի կողմից անցյալի փորձից եկող մտավախություններին՝ վարչապետը հայտնեց, որ այդ գումարները կուտակվելու են վստահելի ֆոնդերի ակտիվներում, և նույնիսկ համաշխարհային ճգնաժամերը չեն կարող խաթարել գործընթացի բնականոն ընթացքը: Հանրապետությունում գործելու են երկու փորձառու կառավարիչներ, որոնք ունեն համապատասխան լիցենզիա և կգտնվեն Կենտրոնական բանկի մշտական հսկողության տակ:

ՀՀ վարչապետ Տ. Սարգսյանը պատասխանեց նաև իրեն ուղղված մի շարք հարցերի:

5. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Է. Հովհաննիսյանի հայտարարությունը Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմիններին բնակչության պետական ռեզիստրի տեղեկատվական համակարգից տվյալներ տրամադրելու կարգի մասին:

